

Գ. Գ. ՄԵՅՐԱԲԵԱՆ

մեկնեց ԿԻՍԼՈՎՈԴՍԿ (հանքային ջրեր) Հիւանդաների ընդունելութիւնը՝ Կօլոսօվայի հիւրանոցում («ՆԱՐԴԱՆԻ» բալեռէայի գիտաց):

առ.

444.

3-2

Բ Ժ Ի Շ Կ

ՄԱԿԱՐԵԱՆՑ

Մայիսի 15-ից վերսկեց հիւանդաների ընդունելութիւնը

Պ Ե Ա Տ Ի Գ Օ Ր Ս Կ Ո Ւ Մ

Մասնագիտաբար—միզասեռական, վեճերուկան, սիֆիլիս և կաշուք հիւանդութիւններ Հասցէն՝ Վերխոյ Ըլլեվար, ճ. Զովալով. (օ.մ.) առ. 401. 20-5

ՃԱՐԺՎԵՑԷՔ, ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏՆԵՐ

Այն յուսահատական ճիշճ, աղաղակը, որ արձակեց ոռւս հրապարակախոս Օլգենինը ամսիս 27-ի երեկոյեան իր դասախոսութեան ժամանակ, ուղղված հազարաւոր հայ հասարակութեան և հայ ինտելիցիենցիային, որոնք նորին լուլեան մէջ ունկնդրում էին նրան, սովորում է մեղ ևս ձայն բարձրացնել և կոչ անել հայ դրամատէրերին ու ասել.

Հայ հարուստներ, հայ կապիտալիստներ, կատարեցէք ձեր մարդկային, ազգային և մարդասիրական պարտքը, կատարեցէք, որովհեան եթէ յապահէք կատարելու այդ պարտքը՝ մայր հայը բնիքը, Հայաստանը, ուր հազարաւոր տարիներից ի վեր հանդչում են մեր նախնիքների աճիւները, որ եղել է որբան մեր ազգային քաղաքակըրթութեան, հանդիսարան մեր պատմութեան, մեր ժողովրդի հերոսական առաքինութիւնների, այդ հայրենիքը կան հետանայ:

Ուսւածապարհորդը վկայում է, որ միակ լուսատու աստղը Թիւրքահայաստանի համատարած խաւար հօրիգօնի վրա՝ Միացեալ Ընկերութիւնն է, այն Ընկերութիւնը, որի բարգաւաճման այնքան նպաստեցին առաջ ուսւահայերը, Գր. Արծունու կոչով,

այն Ընկերութիւնը, որ այսօր դպրոցներ է բացում հեռաւոր և խուլ անկիւններում, գիւղերում, բայց չէ կարողանում լայն և ընդարձակ գործունելութիւն ցոյց տալ, որովհետեւ չուն անհրաժեշտ նիւթական միջացները:

Ուրեմն անհրաժեշտ հրամայողական պահանջ է օգնել Միացեալ Ընկերութեան, որ զեւ անցեալ տարի գիմեց ուսւահայերին, խնդրելով օգնութիւն:

Սակայն, հակառակ եղած յորդորներին և կոչերին, ուսւահայերը մինչև այժմ զացան իրական օգնութիւն հասցնել այդ վերին աստիճանի օգտակար Ընկերութեան, այլ բաւականացնալու պահանական համակրութեամբ:

Միացեալ Ընկերութիւնը և եգիպտոսի Հայոց Ընդհանուր Բարեգործ Միասնականը միակ հաստատութիւններն են, որոնք մտածում են Թիւրքահայաստանի կրթութեան մասին, որոնք գլորոցներ են բացում, հետևաբար, պահպանում են հայ լեզուն, հայ գիրը, հայ գրականութիւնը:

Եւ միտարուց աւելի է, որ «Մշակը» յորդոր է կարգում ուսւահայերին օգնութեան ձեռք կարկանել այդ վերին աստիճանի օգտակար և համակրելի հաստատութիւններին, որպէսզի նրանք կարողանան կատարել իրանց միստիանց գրագիտութիւն և ուսումն տարածել Հայաստանի մէջ. Եւ սակայն ուսւահայերը գեռ անտարբեր և խուլ մնացին այդ յորդորներին:

Հրապարակի վրա դրված է դպրոցական Փօնդի խնդիրը, Փօնդի, որով պէտք է յաւերժացնել համազգային մեծ յօրելեանը:

Մենք առաջ ևս այն կարծիքն ենք յայտնել, որ դպրոցական Փօնդը համազգային պէտք է լինի, Ֆօնդը կը պահպանվի էջմիածնում, սինօգում, բայց նրա տոկոսիքները կը գործադրվեն Ռուսաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի հայոց դպրոցների պահպանութեան վրա:

Ուրեմն թող հանդէս գան հայ բարեգործներ, հայ հարուստներ, նուիրելով կամ կոտակելով որոշ գումարներ Թիւրքահայաստանի ուսման և կրթութեան գործի համար, յօգուտ Միացեալ Ընկերութեան և Հայկական Բարեգործական Միութեան:

Հ. Առաքելիսան